ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ մայիսի 2 N 34 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԶԱՐԻՆՋԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՀԱՑԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԱՊԱՐԱՆԻ Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, << ԱՊԱՐԱՆԻ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ՇԱՄԻՐԱՄԻ ՈՒՍՈՒՄԲԵԿԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Զարինջայի միջնակարգ դպրոց>>, <<Հացաշենի հիմնական դպրոց>>, <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>>, <<Ապարանի Հ. Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> և << Շամիրամի Ուսումբեկի անվան հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի պետ՝ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Սիրան Ասատրյանի, Արիս Թովմասյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 18 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի մայիսի 6-ից ավարտել 2013 թվականի մայիսի 31-ին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ